«Պլանետարիում» աստղագիտական, գիտակրթական կենտրոնի ստեղծում



Ծրագրի նկարագիրը[1]

Ծրագրի նպատակն է մայրաքաղաքում ստեղծել աստղագիտական, գիտակրթական կենտրոն՝ «Պլանետարիում», որը հնարավորություն կընձեռի հանրամատչելի ձևով գիտելիքներ ստանալ աստղագիտության և բնական այլ գիտությունների նվաճումների, անվանի հայ գիտնականների հայտնագործությունների և ձեռքբերումների վերաբերյալ, ծանոթանալ ավանդույթներին և պատմությանը, կազմակերպել թեմատիկ քննարկումներ և համաժողովներ: Նոր տեխնոլոգիաներով և սարքավորումներով հագեցած կենտրոնը նախատեսված կլինի ավելի քան 200 այցելուների համար, որտեղ կառաջարկվի հետաքրքիր ժամանաց բոլոր տարիքային խմբերի համար: Կենտրոնը հետաքրքիր վայր կարող է դառնալ նաև Հայաստան այցելած զբոսաշրջիկների համար:

Նախատեսվում է կառույցի մի հատվածը նախագծել մոլորակի կամ այլ

[1] *Նախագծում առկա նկարները տարբեր քաղաքներում գործող կամ նախատեսվող նմանատիպ կենտրոնների օրինակներ են:*

տիեզերական մարմնի տեսքով, որն այցելուների համար այն ավելի գրավիչ կդարձնի: Կենտրոնում հնարավոր կլինի կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, կգործեն աստղագիտական-կրթական խմբակներ:

Ծրագրով նախատեսվում է՝

- աստղադիտարան,
- թանգարան, ցուցասրահ,
- գիտահետազոտական կենտրոն,
- աստղերի թատրոն,
- ստերեոկինոթատրոն,
- 4D կինոթատրոն,

- ֆոտոստուդիա,
- աստղադիտակ,
- արևային ժամացույց,
- հուշանվերների խանութ,
- սրճարան,
- ավտոկայանատեղի:

Տեխնիկական ցուցանիշներ	Համալիր կենտրոնի ընդհանուր մակերեսը կկազմի 2000 քմ:
Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 3 տարի:
Ծրագրի արժեքը	Շուրջ 2 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: